Հավելված 1
2026թ. «Հունվար» «30» -ին
կնքված N Ա.1193.02-1 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N 1
Երկրորդ եռամսյակի բովանդակային հաշվետվություն
1.Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «ԱՈՒՏԻԶՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» |
| Դրամաշնորհի N | «ԿԳՄՍՆ-ԴՇ-1193.02» |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | Աուտիզմ ազգային հիմնադրամ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 01.01.2026թ. – 31.12.2026թ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2026թ.-ից – 30.06.2026թ. |
| Ներկայացման օր | 30.06.2026թ. |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Աուտիզմ ազգային հիմնադրամի գործադիր տնօրեն Լիլիթ Աթաջանյան |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

1.***Աուտիզմ և այլ խանգարումներ ունեցող երեխաների դիտարկում, կարողությունների գնահատում, զարգացման և վարքային ծրագրերի կազմում՝ 100 երեխաների համար:***

*Սկզբանական միջոցառումները ներառում են՝*

- *Հարցազրույց ծնողների հետ*
- *Երեխայի վարքի դիտարկում*
- *Երեխայի նախնական գիտելիքների և ունակությունների գնահատում և անհատական ծրագրի կազմում:*

*Անհատական ծրագիրը մշակվում և ղեկավարվում է մասնագիտական բարձր որակավորում ունեցող ծրագրի ղեկավարների կողմից:*

***2. Լոգոպեդական ծառայություն. խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման և շփման ունակությունների զարգացում՝ 80 երեխաների համար: Պատկերների Փոխանակման Հաղորդակցման համակարգ PECS և այլ այլընտրանքային հաղորդակցման ձևերի ներդրում և զարգացում:***

- *Տարբեր սոցիալական իրավիճակներում աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների փարրակիան հաղորդակցման հմտությունների, խոսքի ձևավորում և զարգացում:*
- *Լսողական ուշադրության և ընկալման զարգացում:*
- *Խոսքի ընկալման զարգացում, հուզա-իմաստային մեկնաբանության միջոցով: Հրահանգների կատարում:*
- *Շարժողական հմտությունների ձևավորում և ժեստային հաղորդակցման զարգացում: Խոսքի օրգանների շարժողական ձևավորում:*
- *Ոչ խոսքային՝ այլընտրանքային հաղորդակցման ձևավորում (ժեստային հաղորդակցություն, PODD և PECS համակարգեր):*
    - *Աշխատանքները իրականացնել փոքր խմբային և անհատական ուսուցման ձևաչափերով:*

***3. Երեխաների ներառումը հանրակրթական համակարգ՝ 40 երեխաների համար:***

- *Նախադպրոցական և հանրակրթական հաստատությունում աուտիզմ և զարգացման խնդրիներ ունեցող երեխաների դիտարկում դպրոցական տարբեր միջավայրերում՝ դասասենյակում, դասամիջոցին, բազմամասնագիտական ծառայությունների ընթացքում:*
- *Դպրոցում ուսուցման և ներառման դժվարությունների վերհանում, քննարկումներ ղեկավար անձանց հետ:*
- *Ուսուցիչների, մասնագետների և ուղղորդող մասնագետների հետ դեպքերի քննարում, դժվարությունների վերհանում և դրանց հնարավոր լուծումների քննարկում:*
- *Արդյունավետ մեթոդական ուղղությունների, մեթոդների, ընթացակարգերի առաջարկներ ուսուցիչներին և բազմամասնագիտական թիմին:*
- *Խորհրդատվություն ծնողներին:*

***4. Կիրառական Վարքային Վերլուծություն (ABA)՝ 100 երեխաների համար***

Սաների հետ իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- *Գնահատման արդյունքներին համապատասխան բաժանել երեխայի դեֆիցիտ հանդիսացող հմտությունները մանր մասերի, որոնք հիմք կհանդիսանան առավել բարդ հմտությունների ուսուցմանը և զարգացմանը:*
- *Ուսուցանել անհրաժեշտ հմտությունները՝ ըստ անհատական ծրագրի նպատակադրումների՝ կիրառելով Կիրառական Վարքային Վերլուծության (ABA)*

մեթոդները՝ DTT, TIT (Կարբոնեի գունավոր քարտերը), բնական ուսուցում (NET) և իրավիճակային ուսուցում (IT):

- ➢ Աշխատանքները իրականացնել փոքր խմբային և անհատական ուսուցման ձևաչափերով:

**5.Երաժշտական թերապիա՝ 75 երեխա**

Սաների հետ իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- Խթանել նմանակման շարժողական ֆունկցիաները:
- Շտկել և զարգացնել զգայական ֆունկցիաները ու հնարավորությունները:
- Խթանել խոսքի զարգացումը:
- Կարգավորել խոսքի տեմպը, ռիթմը շեշտադրությունը, տեմբրը, արտահայտչականությունը:

Երաժշտաթերապիան իր մեջ կներառի՝

- երաժշտական ստեղծագործությունների ունկնդրում,
- ծանոթացում երաժշտական գործիքներին,
- տարբեր երաժշտական գործիքների փիրապետում,
- երգեցողություն,
- երաժշտության ներքո ռիթմիկ շարժումների կատարում,
- երաժշտության զուգակցում կատարվող աշխատանքի հետ:

- ➢ Աշխատանքները իրականացնել փոքր խմբային և անհատական ուսուցման ձևաչափերով:

**Արտթերապիա՝ 80 երեխաների համար**

Սաների հետ իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- Ինքնակառավարման և ուշադրությունը կենտրոնցնելու կարողությունների զարգացում
- Երևակայության զարգացում
- Տարածական ընկալման զարգացում
- Ստեղծագործական գործունեության զարգացում
- Երեխայի հետ սոցիալական միջավայրի հետ փոխազդեցության փործի հարստացում
- Գունաճանաչողություն, երկրաչափական պատկերների ընկալման և կառուցողական կարողություններրի ձևավորում, զարգացում
- Համատեղ ուշադրության և գործունեության զարգացում
- Ոչ խոսքային նմանակման զարգացում արտթերապևտիկ վարժությունների և տեխնիկաների կիրառում
- Աշխատանք հուզական հակազդումների հետ

- ➢ Աշխատանքները իրականացնել փոքր խմբային և անհատական ուսուցման ձևաչափերով:

**Կավաթերապիա՝ 90 երեխաների համար**

Սաների հետ իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- ➢ Նվազեցնել նյարդային լարվածությունը կավի հետ աշխատանքի միջոցով
- ➢ Նվազեցնել կամ հավասարակշռել շոշափելիքի զգայական խնդիրները
- ➢ Զարգացնել ձեռքերի մանր մոտորիկան
- ➢ Աշխատանքները իրականացնել փոքր խմբային և անհատական ուսուցման ձևաչափերով:

Օկուպացիոն թերապիա (էրգոթերապիա)՝ 100 երեխայի համար

Սաների հետ իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- ինքնասպասարկման հմտությունների ձևավորում,
- ինքնակառավարման հմտությունների ձևավորում,
- պատշաճ միջանձնային հարաբերություններ հաստատելու հմտությունների ձևավորում և զարգացում,
- ինքնուրույնության հմտությունների ձևավորում և զարգացում. որոնք թույլ կտան ներգրավվելու այնպիսի գործողությունների մեջ, որոնք կարևոր են տվյալ

*երեխայի համար և իմաստ են հաղորդում նրա կյանքին:*

*Կենտրոնում էրգոթերապիան ներառել աշխատանքի մի քանի ոլորտներում*

- *Զգայական ինտեգրացիա*
- *Զբաղվածությունների, կենցաղային հմտությունների ձեռքբերում*
- *Ինքնասպասարկում*
- *Գնումներ խանութից*
- *Ուտեստների պատրաստում*
- *Աշխատանքային հմտությունների ձեռքբերում*
- *Ձեռքի աշխատանք*

## Պարային թերապիա՝90 երեխայի համար

Սաների հետ իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- *Ռիթմի զգացողության ձևավորում*
- *Շարժումների օգնությամբ հուզական լիցքաթափում*
- *Խոշոր շարժումների զարգացում*
- *Նմանակման հմտությունների ձևավորում և զարգացում*

***Թերապիա շան միջամտությամբ՝ 70 երեխա***

- *Կազմակերպել զբոսանքներ շան հետ, կերակրել և խնամել շանը՝ ինչը թույլ կտա բարելավել երեխաների ակտիվությունը և շարժողականությունը, կնվազեցնի կենդանուց վախերն ու տագնապները, կբարելավի հուզական ինքնավերահսկողության կարողությունը, սոցիալական և հաղորդակցման հմտությունները:*

***6. Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնին և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններին աջակցություն ՝4 այց:***

- Իրականացնել այց Հանրապետական մանկավարժական կենտրոն, որի շրջանակներում ձեռք բերել համաձայնություն անհրաժեշտ իրազեկումների, հանդիպումների, դպրոցական այցերի, վերապատրաստումների վերաբերյալ:
- Պլանավորել 2 ական իրազեկում, վերապատրաստումներ տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների մասնագետների, մանկավարժների համար

***7⍰ Սոցիալականացման ծրագիր ՝100 երեխաների համար***

- *Սաների հետ իրականացնել այցեր հասարակական տարբեր վայրեր*
- *Տարբեր հասարակական և սոցիալական վայրերում ձևավորել և զարգացնել սոցիալական կանոններին, նորմերին, իրավիճակին համապատասխան հաղորդակցման, փոխհարաբերություններ կառուցելու հմտություններ*

***8. Հոգեբանական աջակցություն՝ 85 շահառուների համար***

- *Իրականացնել հոգեբանական աշխատանք ուղղված նոր երեխաների հարմարման շրջանը սահուն իրականացնելու համար:*
- *Իրականացնել հոգեբանական աշխատանք ուղղված տագնապայնությանը, վարքային, ուշադրության պակասի և այլ աուտիզմի սպեկտրին զուգակցված ախտանիշների թեթևացման կամ կորեկցիայի ուղղությամբ:*
- *Իրականացնել հոգեբանական աշխատանք՝ ուղղված սաների ինքնավերահսկման, ինքնակարգավորման մեխանիզմները ձևավորելու և զարգացնելու ուղղությամբ:*
- *Իրականացնել հոգեբանական աշխատանք՝ ուղղված աուտիստիկ սպեկտրի վաղ կանխարգելմանը՝ զարգացման հիմնական չափորոշիչների ուղղությամբ:*

- Իրականացնել խմբային հանդիպումներ ծնողների հետ՝ քննարկելով ծնողավարման առանցքային խնդիրները, իրականացնելով հոգեկրթման և ուղղորդման աշխատանք:
- Աշխատանքները իրականացնել խմբային և անհատական ձևաչափերով:

9. **Ադապտիվ ֆիզկուլտուրա՝ 80 երեխայի համար**
   - Ձևավորել և զարգացնել շղթայական հրահանգներին հետևելու, կանոններին ենթարկվելու հմտությունները:
   - Զարգացնել խոշոր շարժումների համակարգը:
   - Զարգացնել տարածական կողմնորոշումը և կոորդինացիան:
   - Ձևավորել ստատիկ և դինամիկ հավասարկշռությունը:
   - Ձևավորել և զարգացնել ինքնակարգավորման և ինքնավերահսկման հմտությունները:
   - Ձևավորել խմբային համագործակցության, խմբային պատկանելիության հմտությունները, խմբային շարժումների կազմակերպումը և շարժողական հնարավորությունների ընդլայնումը:

10. **Վերապատրաստումների անցկացում աուտիզմ ունեցող երեխաների ծնողների և ոլորտում աշխատող մասնագետների համար՝ 4 հանդիպում**

Իրականացնել խորհրդատվությունների տրամադրում հանրակրթական դպրոցների ուսուցիչների և նախադպրոցական հաստատությունների մասնագետների ոլորտում աշխատող այլ մասնագետների համար, երեխայի ծնողների համար՝ երեխայի կրթության կազմակերպման, աջակցության ծառայությունների տրամադրման և սոցիալական ներառման հարցերի շուրջ:

- Խմբային քննարկումներ միասնական հարցի շուրջ:
- Մասնագիտական վերապատրաստումներ մասնագետների համար:
- Անհատական ծրագրերի քննարկումներ:
- Անհատական խորհրդատվություն/գործնական պարապմունք:

11. **Աջակցություն հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ ուսուցման առանձնահատուկ կարիք ունեցող աշակերտների ներառմանը՝ 12 հանդիպում**

Իրականցնել խորհրդատվական փոխայցեր <u>նախադպրոցական</u> և <u>հանրակրթական ուսումնական հաստատություններ</u>:

- Առաջ եկած խնդիրների լուծում և խորհրդատվություն:
- Հաջողված փորձի, քաղած դասերի ներկայացում:
- Համատեղ գործնական պարապմունքների իրականացում:
- Աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող սովորողների կրթության կազմակերպման մեթոդաբանության տրամադրման գործում:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացը՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Երկրորդ եռամսյակի ընթացում 100 շահառուների հետ կնքվել են նոր պայմանագրեր, որոնցից 14-ը Արցախից տեղահանված ընտանիքի երեխաներ են: Երկրորդ եռամսյակի ընթացքում 2 շահառու ընտանեկան հանգամանքներից ելնելով, հեռավորության, գրաֆիկի անհարմարության պատճառով դուրս են եկել ծրագրից: Գրանցված երեխաների ցանկից ծրագիրը համալրվել է և ս 2 շահառույով:

Նոր շահառուները ներգրավվել են տարիքին և ֆունկցիոնալությանը համապատասխան խմբերում, շահառուները դիտարկվել են և գնահատվել: Կազմակերպվել է ծնողների

խորհրդատվություն՝ ըստ պահանջի, ներկայացվել են երեխաների նախնական անհատական հարմարման ծրագրերը:

Գործողությունները ամբողջական իրականացնելու նպատակով իրականացվել են հետևյալ ծառայությունները՝

- **Կիրառական Վարքային Վերլուծություն (ABA)-Վարքային թերապիա**
- **Խոսքային թերապիա**
- **Օկուպացիոն թերապիա (էրգոթերապիա)**
- **Արտթերապիա**
- **Կավաթերապիա**
- **Երաժշտաթերապիա**
- **Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա**
- **Պարային թերապիա**
- **Թերապիա շան միջամտությամբ**
- **Սոցիալական ծրագրեր**
- **Ներառական ծրագրեր**
- **Խորհրդատվություն և հոգեբանական աջակցություն**
- **Տեսագործնական վերապատրաստումներ ծնողների և ոլորտում աշխատող մասնագետների համար**

**Կիրառական վարքային վերլուծություն**

Հիմնական մեթոդը, որը կիրառվում է, Կիրառական վարքային վերլուծությունն է (ԿՎՎ/ ABA), որն հնարավորություն է տալիս մշակել զարգացման և վարքի փոփոխման անհատական ծրագրեր՝ հիմնվելով երեխայի վարքի, մտավոր ունակությունների և հմտությունների մանրակրկիտ հետազոտման վրա: Բոլոր վերոնշյալ ակնկալվող արդյունքները գնահատվում են ԿՎՎ-ում առկա գնահատման համապատասխան չափորոշիչներով: Կենտրոնի սաները գնահատվում են VB-MAPP-ի տեղայնացված գնահատման գործիքով, և արդյունքների հիման վրա յուրաքանչյուր երեխայի համար կազմվել է անհատական ծրագիր: Յուրաքանչյուր երեխայի համար, ըստ նախնական անհատական զարգացման ծրագրի երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակադրումների, որը ներառում է երեխայի գիտելիքների, հմտությունների, զարգացման փուլերի, խոչընդոտների և տարածական տեղափոխելիության գնահատում (VB-MAPP), իրականացվել են դիտարկումներ, անհատական զարգացման ծրագրերի անհրաժեշտ վերանայում, շարունակական մեթոդական վերահսկում, վերագնահատում:

ԿՎՎ/ABA ծրագրի ներդրման համար, որն ուղղված է սանի սոցիալապես ոչ հարմարվողական վարքի նվազեցմանը և նոր վարքային հմտությունների ձևավորմանը, իրականացվում է որոշումների կայացման հետևյալ հիմնական մեխանիզմը:

- Թիրախային վարքի ընտրություն
- Ոչ հարմարվողական վարքի վերաբերյալ որակական և քանակական տվյալների հավաքագրում
- Միջամտության ռազմավարությունների մշակում
- Առաջընթացի գնահատում

**Լոգոպեդական ծառայություն խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման և շփման ունակությունների զարգացում: Ծառայության մեջ ներգրավվել են 1-14 տարեկան 80 սաներ:** Երեխաների հետ խոսքի զարգացմանն ուղղված աշխատանքը իրականացվել է ինչպես խմբային, այնպես էլ անհատական ձևաչափով, մեկ պարապմունքի տևողությունը 30 րոպե: Խմբային աշխատանքի ընթացքում կարևորվում է սաների սոցիալական հմտությունների և կարողությունների զարգացումը: Կարևորվում է խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման ձևավորումը և խոսքը որպես ֆունկցիոնալ հաղորդակցման միջոց կիրառումը:

**Իրականացվում է այլընտրանքային հաղորդակցման կարիք ունեցող երեխաների գնահատում, հետագայում ամենաարդյունավետ այլընտրանքային հաղորդակցման եղանակը ընտրելու նպատակով:**

**Երեխաների ներառումը հանրակրթական համակարգ**

2026 թվականի երկրորդ եռամսյակում իրականացվել է այց թիվ 17 հատուկ դպրոց,որտեղ դիտարկվել են կենտրոնի 5 սաների ներառման գործընթացը,ինչպես նաև քննարկվել է դպրոցներում առկա վարքային դժվարություններ ունեցող,աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող այլ երեխաների դեպքեր:Հանդիպումների ընթացքում՝ 1.Քննարկում է իրականացվել աուտիզմ և զարգացման խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատանքում դժվարությունների վերաբերյալ,քննարկվել են հնարավոր լուծումները:2.Դիտարկվել են աուտիզմ և զարգացման այլ խնդիրներ ունեցող երեխաներ՝ դասասենյակում, խմբասենյակում,միջանցքում,թերապիաների ընթացքում:Դիտարկվել է վարքը, ակադեմիական աշխատանքների ընթացքը: 3.Թերապիաներ մատուցող մասնագետների հետ քննարկվել են դիտարկման արդյունքները, վերհանվել են դժվարությունները,առաջարկվել են տեխնիկաներ և մեթոդներ դժվարությունները հաղթահարելու համար: Որոշ տեխնիկաներ անմիջապես ցուցադրվել են երեխայի մասնակցությամբ:

**Կիրառական Վարքային Վերլուծության (ABA) ծառայություններ են մատուցվել 100 երեխայի համար:**

Կենտրոնի մեթոդական հիմք է հանդիսանում ԿՎՎ-ն, բոլոր թերապիաների հիմքում են վարքային վերլուծության հիմնական սկզբունքները՝ Խթանիչ-Վարք- Հետևանք, խրախուսանք, հարմարվողական վարքերի ուսուցում և այլն: Ընդլայնվել են ԿՎՎ-ի մեթոդները: Ներմուծվել է գունավոր քարտերի՝ Կարբոնեի արագ քայլերի ուսուցման մեթոդը, խմբային աշխատանքներում հիմնականում կիրառվում է բնական ուսուցման ռազմավարությունները, իրավիճակային ուսուցման տեխնիկաները:

**Երաժշտաթերապիայի շրջանակներում ներգրավվել են 75 սան:**

2026թ-ի երկրորդ եռամսյակի ընթացքում երաժշտաթերապիայի շրջանակներում աշխատանք է իրականացվել թվով 75 երեխաների հետ: Թերապևտիկ միջամտությունները իրականացվել են անհատական և խմբային ձևաչափերով՝ յուրաքանչյուր պարապմունքը 30 րոպե տևողությամբ:

- Խմբային պարապմունքներին մասնակցել են 2-5 երեխաներ միաժամանակ:
- Երեխաների հետ իրականացվել են դաշնամուրի անհատական դասընթացներ:
- Խմբային պարապմունքների միջոցով աշխատանք է տարվել երեխայի հաղորդակցման, ունկնդրելու, սպասելու և համատեղ աշխատանքներ իրականացնելու ունակությունները զարգացնելու ուղղությամբ:
- Օգտագործելով կիրառական վարքային վերլուծության սկզբունքները, կատարվել է վարքի շտկում երաժշտության միջոցով՝ ձևավորելով նոր ադապտիվ վարքեր:
- Կազմակերպվել է ծնողների հետ համատեղ թերապևտիկ աշխատանք:

**Արտթերապիայի շրջանակներում ներգրավվել են 80 երեխա:**

2026թ-ի երկրորդ եռամսյակի ընթացքում արտթերապիայի ծառայություն է իրականացվել 80 երեխայի հետ: Թերապևտիկ միջամտությունները իրականացվել են անհատական և խմբային ձևաչափերով՝ յուրաքանչյուր պարապմունքը 30 րոպե տևողությամբ:

Խմբային և անհատական թերապևտիկ աշխատանքի նպատակներն են եղել՝

- Խմբային աշխատանքների շնորհիվ խթանել երեխաների շփման և հաղորդակցման հմտությունների զարգացումը, նպաստել խմբային հմտությունների զարգացմանը:
- Նպաստել հուզակամային դրսևորումների ճանաչմանը, արտահայտմանը, նպաստել հոգեհուզական լարվածության թուլացմանը:
- Նպաստել ոչ վերբալ ինտելեկտի զարգացմանը, նպաստել փոխվստահության, փոխհամագործակցության և փոխօգնության զարգացմանը:
- Աջակցել միջանձնային շփման ոլորտում առկա խնդիրների հաղթահարմանը:

Անհատական ծրագրի նպատակադրումները հիմնվում են երեխայի զգայական (հոտառության, շոշափման և հպման արձագանքը) ինքնախթանիչ և կրկնվող վարքային դրսևորումների վրա:

Օկուպացիոն թերապիա (էրգոթերապիա)՝ 100 երեխայի համար

Սաների հետ իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- *ինքնասպասարկման հմտությունների ձևավորում,*
- *ինքնակառավարման հմտությունների ձևավորում,*
- *պատշաճ միջանձնային հարաբերություններ հաստատելու հմտությունների ձևավորում և զարգացում,*
- *ինքնուրույնության հմտությունների ձևավորում և զարգացում, որոնք թույլ կտան ներգրավվելու այնպիսի գործողությունների մեջ, որոնք կարևոր են փոքր երեխայի համար և իմաստ են հաղորդում նրա կյանքին:*

*Կենտրոնում էրգոթերապիան ներառել աշխատանքի մի քանի ոլորտներում*

- *Զգայական ինտեգրացիա*
- *Զբաղվածությունների, կենցաղային հմտությունների ձեռքբերում*
- *Ինքնասպասարկում*
- *Գնումներ խանութից*
- *Ուտեստների պատրաստում*
- *Աշխատանքային հմտությունների ձեռքբերում*
- *Ձեռքի աշխատանք*

Պարային թերապիա՝90 երեխայի համար

Սաների հետ իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- *Ռիթմի զգացողության ձևավորում*
- *Շարժումների օգնությամբ հուզական լիցքաթափում*
- *Խոշոր շարժումների զարգացում*
- *Նմանակման հմտությունների ձևավորում և զարգացում*

**2026 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում կավաթերապիայի ծառայություններից օգտվել են թվով 90 երեխա:**

Խմբային և անհատական թերապևտիկ աշխատանքի նպատակներն են եղել՝

- Նվազեցնել նյարդային լարվածությունը
- Մանր շարժումների զարգացում
- Հաղթահարել գեր/ թեր շոշափողական զգայունակությունը
- Զարգացնել մտածողությունը և երևակայությունը

**2026 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ծրագրում ներգրավվել են 80 սաներ:**
Ելնելով երեխաների հմտությունների գնահատման արդյունքներից՝ պարապմունքները իրականացվել են անհատական և խմբային ձևաչափերով:

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- Ֆիզիկական կուլտուրայի դասերին երեխայի մոտիվացիոն գործունեության ճիշտ օգտագործումը
- Երեխայի համար ուսուցման միջավայրի ստեղծում
- Զգայական բեռնաթափման վարժություններ, նյարդային լարվածությունը թեթևացնելու համար
- Շարժումները, որոնք համարժեք են երեխայի մարմնի ֆիզիոլոգիական հնարավորություններին, միշտ առողջության բարելավման գործոն են:

**2026 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում շան միջամտության թերապիայում ներգրավվել են 70 սաներ:**
Կազմակերպվել են զբոսանքներ շան հետ, երեխաները կերակրել և խնամել են շանը՝ ինչի նպատակն է եղել բարելավել երեխաների ակտիվությունը և շարժողականությունը, նվազեցնել կենդանուց վախերն ու տագնապները, բարելավել հուզական ինքնավերահսկողության կարողությունը, սոցիալական և հաղորդակցման հմտությունները:
**Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի և տարածքային Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններին/ՏՄԱԿ/աջակցություն:**

Իրականացվել է առաջին և երկրորդ եռամսյակների համատեղ 5 հանդիպում տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների 54 աշխատակիցների հետ, որոնք այցելել են «Աուտիզմ ազգային հիմնադրամ», կատարվել է շրջայց, մասնագետները ծանոթացել են հիմնադրամի գործունեությանը, դիտարկել են ընթացիկ աշխատանքները: Հանդիպման շրջանակում կազմակերպության մասնագետ Ինեսսա Հարությունյանի կողմից իրականացվել է սեմինար՝ «Սոցիալական հմտությունների ձևավորում խաղի միջոցով»թեմայով:

**Այց իրականացրել են հետևյալ ՏՄԱԿ-ների բազմամասնագիտական թիմերը**

- ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 3 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
- ԵՐԵՎԱՆԻ № 2 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
- ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
- «ՁԵԶ ՀԱՄԱՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ՈՐՊԵՍ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
- ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հանդիպման ժամանակ՝

- ✓ Փորձի փոխանակում և մասնագիտական համագործակցություն
- ✓ Դեպքերի քննարկում
- ✓ Տեսանյութերի դիտում և վերլուծություն

**Վերապատրաստումների անցկացում ոլորտում աշխատող մասնագետների համար**

«Աուտիզմ ազգային հիմնադրամ»-ի մասնագիտական անձնակազմի համար իրականացվեց վերապատրաստման դասընթաց՝

- ✓ «Մասնագիտական էթիկական սկզբունքներ» և «Աուտիստիկ սպեկտրի խանգարումների ախտորոշման չափորոշիչները, վարքային առանձնահատկությունները, պատմական և թերապևտիկ մոտեցումները» թեմայով:

Վերապատրաստումն անցկացրեց նախադպրոցականների և դպրոցականների խմբի կրթական ծրագրերի մասնագիտական գործընթացների վերահսկման ղեկավար՝ Հայկանուշ Դիլանյանը:

**Աջակցություն հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների ներառմանը:**
**Իրականացվել են 6 առկա հանդիպումներ Հանրակրթական հաստատությունների հետ, որտեղ ընդհանուր առմամբ մասնակցել են 102 դասախոսական կազմ և մանկավարժներ:**

- ✓ ԵՐԵՎԱՆԻ ԳԵՎՈՐԳ ԱՐՇԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 22 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ;
- ✓ ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ԱՆՎԱՆ № 124 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
- ✓ ԵՐԵՎԱՆԻ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 37 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
- ✓ ԵՐԵՎԱՆԻ ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 192 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
- ✓ ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
- ✓ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՑՈ ՅԱՎՈՐՈՎԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 131 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Հանդիպումների ընթացքում՝

- Քննարկվել են աուտիզմ և զարգացման այլ խնդիրներ ունեցող անձանց ներառմանն ուղղված հարցերը մանկապարտեզներում
- Իրազեկման հանդիպումներն ուղեկցվել են գործնական առաջադրանքներով և ակտիվ քննարկումներով:
- Ծնողների և մանկավարժական թիմերի հետ քննարկվել են՝ ինչպես տեսնել, ճանաչել աուտիզմի «կարմիր» դրոշակները և ծնողներին հայտնել այդ անհանգստությունների մասին:
- Անձնակազմերին ներկայացվեց աուտիզմի մասին տեսասահիկ, հարց ու պատասխանի

- միջոցով քննարկվեցին հանրակրթական հաստատություններում առկա խնդիրները այն երեխաների ինտեգրման հարցում, ովքեր ունեն աուտիզմ ախտորոշումը:

**2026 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում կենտրոնում իրականացվող սոցիալական ծրագրերում ներգրավվել են 100 սաներ:**

Սոցյալիզացիայի ծրագրերի շրջանակներում իրականացվել է 24 սոցիալիզացիայի այց տարբեր սոցիալական և հասարակական հետևյալ վայրեր՝

- ✓ Նանսենի այգի՝ 2 այց
- ✓ Պատանի հանդիսատեսի թատրոն՝ 1 այց
- ✓ Պլանետարիում՝ 1 այց
- ✓ Էդիտ Պրինտ՝ 1 այց
- ✓ Խնկո Ապոր գրադարան՝ 1 այց
- ✓ Փինկ բերրի պաղպաղակի գործարան՝ 3 այց
- ✓ Սուրբ Սարգիս եկեղեցի՝ 1 այց
- ✓ Լիոնի այգի՝ 2 այց
- ✓ Քաղաքային տուր՝ 5 այց
- ✓ Կինոպարկ՝ 3 այց
- ✓ Պիկնիկ՝ 1 այց
- ✓ Բնության թանգարան 1՝ այց
- ✓ Օղակաձև այգի՝ 1 այց
- ✓ Հաղթանակ զբոսայգի 1 այց

**Սոցիալիզացիայի ծրագրի հիմնական նպատակներն են եղել՝**

- Տարբեր սոցիալական վայրերում սոցիալական կանոնների և նորմերի ուսուցում՝ սոցիալական ակնկալիքներին համապատասխան
- Ֆունկցիոնալ սոցիալական հմտությունների և կարողությունների ուսուցում
- Սոցիալական տարբեր միջավայրերում անվտանգ վարքերի ուսուցում
- Կենտրոնում ձեռք բերված գիտելիքների ընդհանրացում
- Սոցիալական տարբեր միջավայրերում տագնապների և զգայական խնդիրների հաղթահարում
- Երեխան ծնողների հետ և երեխան առանց ծնողների ճանապարհի հաղթահարում
- Տրանսպորտից օգտվելու կարողություն
- Առանց խնդրահարույց վարքերի երկարատև ճամփորդելու կարողություն
- Ճանապարհատրանսպորտային կանոնների ուսուցում
- Ծնողների հետ երեխաների հարաբերությունների դիտարկում
- Համագործակցություն ծնողների միջև
- Մասնագետ- երեխա շփումը այլ միջավայրում
- Գիտելիքների ամրապնդում

**2026 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում կենտրոնում հոգեբանական աջակցություն են ստացել 85 երեխաներ և ծնողներ:**

**Հանդիպումները իրականացվել են խմբային և անհատական ձևաչափերով:Հոգեբանական աշխատանքի հիմնական նպատակներն են եղել՝**

- Իրականացնել հոգեբանական աշխատանք՝ ուղղված նոր երեխաների հարմարման շրջանը սահուն իրականացնելու համար:
- Իրականացնել հոգեբանական աշխատանք՝ ուղղված տագնապային, վարքային, ուշադրության պակասի և այլ աուտիզմի սպեկտրին զուգակցված ախտանիշների թեթևացման կամ կորեկցիայի ուղղությամբ:
- Իրականացնել հոգեբանական աշխատանք ուղղված սաների ինքնավերահսկման, ինքնակարգավորման մեխանիզմները ձևավորելու և զարգացնելու ուղղությամբ:
- Իրականացնել հոգեբանական աշխատանք՝ ուղղված աուտիստիկ սպեկտրի վաղ կանխարգելմանը՝ զարգացման հիմնական չափորոշիչների ուղղությամբ:
- Իրականացնել խմբային հանդիպումներ ծնողների հետ՝ քննարկելով ծնողավարման առանցքային խնդիրները, իրականացնելով հոգեկրթման և ուղղորդման աշխատանք:
- Աշխատանքները իրականացնել խմբային և անհատական ձևաչափով

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

https://www.facebook.com/share/p/1Cj6TnqJkK/
https://www.facebook.com/share/v/1DxvwAXtMZ/
https://www.facebook.com/share/v/1CjjRMcFV7/
https://www.facebook.com/share/v/18F1ZUM15R/
https://www.facebook.com/share/v/17vM65X4NU/
https://www.facebook.com/share/v/1CiVFncRUf/https://www.facebook.com/share/v/1DmqB7jPYJ/
https://www.facebook.com/share/v/1BEnyxJ5tC/
https://www.facebook.com/share/v/1GB5TDZeMi/
https://www.facebook.com/share/p/1HjCWibRo6/
https://www.facebook.com/share/p/1C9xS9V42Z/
https://www.facebook.com/share/p/1Ax7dH4iPG/
https://www.facebook.com/share/p/1CYWSZpFRB/
https://www.facebook.com/share/p/1Cf7AcGGJn/
https://m.facebook.com/story.php?story_fbid=pfbid02c8quHXfmRj5e6tCbzmKmS1mGG5fFp7LxV9znb47YuL99D2oPAK4izmLvQKwe1D56l&id=100063470893345
https://m.facebook.com/story.php?story_fbid=pfbid0VFFB5BzZxDYQBrSdk7hbX3nT22qrrwBb52c52kRbRFQdiLcthF27ByBc7jyLBHKXl&id=100063470893345
https://www.facebook.com/share/p/1CrvULX6aV/
https://m.facebook.com/story.php?story_fbid=pfbid033XsP7stqSFFkEqUvibKupvZkvGx4A2QJZHpbTJ4XpzjCe9TsVaBfMPmPsf4un79Nl&id=100063470893345
https://m.facebook.com/story.php?story_fbid=pfbid0e2AUwd4LA2QWFSNXBQf3cvvmCze9sWw9Yd99qW2zYjmme7W2sJd4BbDbe3vkMu6Hl&id=100063470893345
https://www.facebook.com/share/v/1KajAVArex/
https://www.facebook.com/share/p/1B7CPAaFfC/
https://www.facebook.com/share/p/1bSoadFjFm/
https://www.facebook.com/share/p/1Cf4xMspjr/
https://www.facebook.com/share/p/1DknKNiupE/
https://www.facebook.com/share/r/18btWTZ1LN/
https://www.facebook.com/share/p/1DdVFX2ZZQ/
https://www.facebook.com/share/p/1BcF1M9fqY/
https://www.facebook.com/share/v/1SCwEkap2n/
https://www.facebook.com/share/p/1CtFQAjfve/
https://www.facebook.com/share/p/1BbimeqQvZ/
https://www.facebook.com/share/r/1AryrkiNsX/
https://www.facebook.com/share/p/1AuN32bS1H/
https://www.facebook.com/share/p/1DmTekpuKo/
https://www.facebook.com/share/p/1BAd9JgQAd/
https://www.facebook.com/share/p/1JLybbWJRw/
https://www.facebook.com/share/p/1CWnSJn21q/
https://www.facebook.com/share/p/1HCtvAP3xc/
https://www.facebook.com/share/p/18QUE3bW9x/
https://www.facebook.com/share/p/1aaC2dbTsA/
https://www.facebook.com/share/r/18dJoqsnie/
https://www.facebook.com/share/p/18XDzmj4CF/
https://www.facebook.com/share/r/1EdR17PeiC/
https://www.facebook.com/share/p/1J7kZNpVsZ/
https://www.facebook.com/share/p/1H9saUHun2/
https://www.instagram.com/reel/DX7K5fToPfu/?igsh=Njdpd3RwOGl4YWh2
https://www.instagram.com/p/DYCuvVZCAwV/?igsh=Y3J1OGp5czFiMXAy
https://www.instagram.com/reel/DYFawgGoZVi/?igsh=MXc0YjU5b3czNjJ2Ng==
https://www.instagram.com/reel/DYSQ7fEIm8E/?igsh=MWlkOXg4ZmNteHl6Ng==
https://www.instagram.com/p/DYsEBNzCOwD/?igsh=MTJheHV1ZHdmaGVlZw==
https://www.instagram.com/p/DYxV2mniC4f/?igsh=Z2NuN252N3Z6Z2R6
https://www.instagram.com/p/DY2VLj2iPNf/?igsh=MTV1dDZ6czZqbjF1cw==
https://www.facebook.com/share/v/1LhuU8X4K9/

https://www.facebook.com/share/v/1CbgsetamH/
https://www.facebook.com/share/v/1GX2L9vyCE/
https://www.facebook.com/share/v/18u6tr3gK2/
https://www.facebook.com/share/p/1FDT4CmHFQ/
https://www.facebook.com/share/r/1BUKAZAYjQ/
https://www.facebook.com/share/r/1Fom7Y3kiD/
https://www.facebook.com/share/v/1T2p3tZ78g/
https://www.facebook.com/share/v/195iG6Kjxo/
https://www.facebook.com/share/p/1Ehwx4vv2C/
https://www.facebook.com/share/p/1JQZxbKhqR/
https://www.facebook.com/share/p/1JSqA8KpnV/
https://www.facebook.com/share/r/1CXueSbsHZ/
https://www.instagram.com/p/DZcnZwRiClG/?igsh=MW1uZzlwdGR6aHYwZA==
https://www.instagram.com/reel/DZnShDLI3v9/?igsh=MmV1ZzM1dDhnbnll
https://www.instagram.com/reel/DZp539rI1Ip/?igsh=MTY3MjYzc3Q4aHQyZA==
https://www.instagram.com/p/DZ-leT6CDQq/?igsh=MTZtNzl0OXZvaWt3aw==
https://www.instagram.com/reel/DaBF5P_1Ynl/?igsh=dmlnMTQwdjV6Yjht

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

2026թ-ի երկրորդ եռամսյակում արդյունավետ դիտարկվեց և նաև հետագայում կիրառելի՝
1. Ծնողների և մասնագետների համատեղ աշխատանքները
2. Ազգային տոնակատարությունների ներառումը աշխատանքային պլանում
3. Զբաղվածության ծրագրերի ներդրումը և համագործակցությունը Դեռահասների և երիտասարդների բաժնի հետ:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսվում են հետևյալ գործողությունները՝

1. Մշտապես խորհրդատվություն ծնողներին:
2. Երեխայի վարքի դիտարկում՝ ոչ հարմարվողական վարքերի արձանագրում:
3. Նոր հաճախող երեխայի նախնական գիտելիքների և ունակությունների գնահատում երեխայի համար:
4. Անհատական ծրագրի կազմում՝ նոր հաճախող երեխաների համար:
5. Անհատական ծրագրերի իրականացման մոնիտորինգ և վերանայում:
6. Մասնագիտական անձնակազմի վերապատրաստում:
7. Խոսքային թերապիայի իրականացում՝ ուղղված հաղորդակցման հմտությունների զարգացմանը:
8. Հանրակրթական հաստատություններում իրազեկումների և վերապատրաստման դասընթացներ մանկավարժների, մասնագետների համար:
9. ABA թերապիայի ուսումնական և ոչ հարմարվողական վարքերի հետ շտկման ծառայություններ:
10. Երաժշտական թերապիայի ծառայություններ:
11. Արտթերապիայի ծառայություններ:
12. Կավաթերապիայի ծառայություններ:
13. Շան միջամտությամբ թերապիայի ծառայություններ:

14. Հանրակրթական ուսումնական հաստատություններին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում, խորհրդատվական աջակցություն և փոխայցեր Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն:
15. Սոցիալական վայրեր այցելությունների պլանավորում:
16. Հոգեբանական աջակցության տրամադրում ծրագրի շահառուներին և ծնողներին՝ անհատական և խմբային ձևաչափերով:
17. Ադապտիվ ֆիզկուլտուրայի աջակցության իրականացում:
18. Հանրակրթական դպրոցի ուսուցիչներին և երեխաների ծնողների, նախադպրոցական հաստատությունների մասնագետների և ոլորտում աշխատող մասնագետների համար վերապատրաստման դասընթացների, խորհրդատվությունների իրականացում, երեխայի կրթության կազմակերպման, աջակցության ծառայությունների տրամադրման և սոցիալական ներառման հարցերի շուրջ:
19. Այց հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններ՝ իրազեկման և մեթոդական աջակցման տրամադրման նպատակով:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

«Աուտիզմ ազգային հիմնադրամ»-ի առջև դրված միջոցառումները եղել են բազմաբովանդակ և ծավալուն, «Աուտիզմ ազգային հիմնադրամ»-ը հիմնականում ձգտել է կատարել իր ստանձնած գործողությունները՝ պահպանելով բարձր որակական չափանիշները և նպատակ ունենալով լավագույնս բարելավել աուտիզմի սպեկտրի և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների և նրանց ընտանիքների կյանքի որակը: Այդ պատճառով զերծ է մնացել ստանձնել առավել շատ գործառույթներ կամ գերազանցել քանական ցուցանիշները: